## Ինդեքսի նկարագիր

Dimension Armenia USD Corporate Bond Index-ը ներառում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ընկերությունների կողմից թողարկված կորպորատիվ այն պարտատոմսերը, որոնք բավարարում են ինդեքսում ընդգրկվելու չափանիշներին:

| Կշռման մեթոդ | Շուկայական արժեք |
|---|---|
| Վերանայման հաճախականություն | Ամսական |
| Հաշվարկի հաճախականություն | Ամսական |
| Վերանայման ամսաթիվ | Ամեն ամսվա առաջին օրը |
| Հենքային ամսաթիվ | Ամեն ամսվա վերջին օրը |
| Արժույթ | ԱՄՆ դոլար |
| Ինդեքսի մեկնարկ | Մայիս 31, 2021 |
| Առաջին արժեքի ամսաթիվ* | Նոյեմբեր 30, 2020 |

*Մինչև ինդեքսի մեկնարկը ընկած ժամանակահատվածին վերաբերող տվյալները ստացվել են փաստացի տվյալների հիման վրա կատարած հաշվարկների համաձայն՝ ինդեքսի մեթոդաբանությանը համապատասխան:

### Ամսական եկամտաբերություն




| | 1 ամիս | 3 ամիս | 6 ամիս | 1 Տարի | Տարվա սկզբից | 2021 | Մեկնարկից մինչև հաշվետու օր |
|---|---|---|---|---|---|---|---|
| Եկամտաբերություն (%) | 0.75% | 1.30% | 1.28% | 4.31% | 2.29% | 7.45% | 10.31% |

## Ինդեքսի վիճակագրություն

| | |
|---|---|
| Ինդեքսի շուկայական արժեք (ԱՄՆ դոլար) | 244,160,835 |
| Ներառված պարտատոմսերի քանակը | 41 |
| Ընդհանուր անվանական արժեքը (ԱՄՆ դոլար) | 237,236,175 |
| Միջին կշռված արժեկտրոն | 5.10% |
| Միջին կշռված մարման ժամկետայնություն (տարի) | 1.38 |
| Միջին կշռված ձևափոխված դյուրացիա | 1.31 |
| Միջին կշռված մինչև մարում եկամտաբերություն | 3.68% |

Ինդեքսի տվյալները հրապարակվում են վեբկայքում մինչև ամեն ամսվա 20-րդ օրը:

Dimension Armenia USD Corporate Bond Index-ում ներառվելու չափանիշներին, վերանայման կանոններին, կշիռների ընտրմանը, գնի որոշման և այլ հաշվարկների մեթոդաբանությանը, ինդեքսի ագրեգացմանը, և այլ ընդհանուր մեթոդաբանական դրույթներին ավելի մանրամասն ծանոթանալու համար խնդրում ենք կապ հաստատել Դաշմենշն ներդրումային ընկերության հետ:

Կոնտակտային տվյալները՝ ստորև:

Հեռ. +374 10 545670
Հասցե. Ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 2, 27/1
Էլ. հասցե. info@dimension.am
Վեբկայք. www.dimension.am

## Կատարողականի հրապարակում

Դայմենշն-ը սահմանում է ամսաթվեր՝ ինդեքսն օգտագործող անձանց տեղեկատվության թափանցիկությունն ապահովելու նպատակով: Առաջին արժեքի ամսաթիվն այն օրն է, երբ առաջին անգամ հաշվարկվում է ինդեքսի արժեքը: Հենքային ամսաթիվն այն օրն է, որի նկատմամբ հաշվարկվում է հաշվետու ամսվա եկամտաբերությունը: Մեկնարկի օրը ինդեքսի արժեքի առաջին հրապարակային բացահայտման օրն է վեբկայքի կամ այլ հանրային աղբյուրների միջոցով:

Մինչև ինդեքսի մեկնարկը ընկած ժամանակահատվածին վերաբերող տվյալները ստացվել են փաստացի տվյալների հիման վրա կատարած հաշվարկների համաձայն՝ ինդեքսի մեթոդաբանությանը համապատասխան: Հաշվարկներ կատարելիս Դայմենշն-ը օգտագործում է փաստացի, առկա տվյալները (գին, կապիտալիզացիա, և այլն): Տվյալների բացակայության դեպքում կարող են կիրառվել ողջամիտ ենթադրություններ (“Backward Data Assumption”):

Ինդեքսի կատարողականը չի արտացոլում իրական ֆինանսական գործիքներում ներդրումների արդյունք: Դայմենշն-ը հանդիսանում է ինդեքսի արժեքը և այլ վիճակագրությունը հաշվարկող անձը, սակայն չի կառավարում ինդեքսում ընդգրկված բոլոր ակտիվները: Ինդեքսի եկամտաբերության հաշվարկներում ներառված չեն վճարները, որոնք ներդրողը սովորաբար պարտավոր է լինում վճարել ինդեքսի հիմքում ընկած գործիքներում ներդրում կատարելիս՝ առանձին կամ որևէ ներդրումային ֆոնդի միջոցով: Վերը նշված վճարների ներառումը կարող է որոշակիորեն նվազեցնել ներդրողի սպասված եկամտաբերությունը:

## Ընդհանուր հայտարարություն

Ինդեքսի մասնակի կամ ամբողջական վերարտադրումը արգելված է առանց գրավոր թույլտվության: Ինդեքսի անցյալ եկամտաբերությունը ապագա եկամտաբերության ցուցանիշ կամ երաշխիք չէ: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում որևէ ծառայության առաջարկ: Դայմենշն-ի կողմից տրամադրվող ինդեքսը կրում է տեղեկատվական բնույթ և հարմարեցված չէ որևէ անհատի, անձի, կամ անհատների խմբի պահանջներին: Հնարավոր չէ ուղղակի ներդրում կատարել ինդեքսում: Ինդեքսում ընդգրկված ֆինանսական ակտիվներում ներդրում հնարավոր է իրականացնել երրորդ անձանց կողմից առաջարկվող ներդրումային գործիքների միջոցով: